ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության պատվիրակության Արաբական Միացյալ Էմիրություններ (ք. Դուբայ) գործուղման արդյունքների մասին

1. **Անուն Ազգանուն.**

   Հայկ Ասլանյան,

   Արարատ Սահակյան:

2. **Զբաղեցրած պաշտոնը.**

   Նախարարի խորհրդական,

   Շուկայի զարգացման վարչության շուկայի հետազոտության բաժնի պետ:

3. **Գործուղման վայրը և ժամկետները.**

   Ք. Դուբայ (Արաբական Միացյալ Էմիրություններ), 2021թ. հոկտեմբերի 24-ից 27-ը:

4. **Հրավիրող կողմը.**

   «International Astronautical Federation»:

5. **Գործուղման նպատակը.**

   2021թ. հոկտեմբերի 24-ից 29-ը Դուբայում կայացած 72-րդ միջազգային տիեզերագնացության համաժողովին («72nd International Astronautical Congress») մասնակցելու և ոլորտային գործակալությունների ու կազմակերպությունների հետ համագործակցային կապեր հաստատելու նպատակով երկխոսություն սկսելը:

6. **Կայացած հանդիպումները և քննարկված թեմաները.**

   Այցն ի սկզբանե երկու գլխավոր նպատակներ ուներ. ոլորտի զարգացման միտումների մասին տվյալների հավաքագրում և ոլորտային նոր կապերի հաստատմանն ուղղված քայլերի ձեռնարկում:

Հայկական պատվիրակությունը հանդիպումներ ու քննարկումներ է ունեցել հետևյալ միջազգային և ազգային կազմակերպությունների հետ .

- «International Astraunatical Federation» կազմակերպություն (նախագահ՝ պրոֆեսոր **Պասկալ Էրենֆրոեդ**, գործադիր տնօրեն՝ դոկտոր **Քրիստիան Ֆրայթտինգեր**),
- Եվրոպական տիեզերական գործակալություն (Առևտրայնացման, արդյունաբերության և գնումների գծով տնօրեն **Ժերալդին Նաժա**, Ինդուստրիալ քաղաքականության և ՓՄՁ զարգացման դեպարտամենտի ղեկավար **Լուկա Դել Մոնտե**),
- Լեհաստանի տիեզերական գործակալութուն (ղեկավար՝ **Գ. Վռոչնա**),
- Տիեզերական հետազոտությունների ազգային կենտրոն (Եվրոպական և միջազգային կապերի վարչության տնօրեն **Քրիստոֆեր Վենետ**, Նորարարությունների և երկարաժամկետ պլանավորման/Foresight թիմի ներկայացուցիչներ **Լիոնել Բեզ, Միրիամ Քուղնե**),
- Հնդկաստանի տիեզերական հետազոտությունների կազմակերպություն (կազմակերպության նախագահ՝ **Կ. Սիվան, տնօրեն՝ Դ. Ռադհակրիշնան**),
- Ճապոնական ավիատիեզերական հետազոտությունների գործակալություն (Հանրային կապերի վարչության գլխավոր համակարգող **Սասամուրա Մամի**),
- Բրազիլական տիեզերական գործակալություն (Միջազգային հարաբերությունների գրասենյակի ղեկավար՝ **Դանիելա Ֆերեյրա Միրանդա**),
- Կորեական ավիատիեզերական գործակալություն (տիեզերական բիզնես զարգացման պատասխանատու **Պարկ Յոնգ Հյուն**):

Հանդիպումներ և քննարկումներ են տեղի ունեցել նաև հետևյալ մասնավոր կազմակերպությունների հետ .

- «Սաֆրան» (Տիեզերական օպտիկայի վաճառքների պատասխանատու **Էղվե Վեսադ**),
- «**ԷյԴաբլյուէս**» (Բիզնեսի զարգացման կառավարիչ՝ **Գուիդո Բարագլիա**),
- Սատրև (Հիմնադիր և տնօրեն՝ **Գրեգորզ Զվոլինսկի**),
- «Իննոսփեյս» (տնօրեն՝ **Կիմ Սուջոնգ**), ԷյՎիԷս (տնօրեն՝ **Միգել Անգել Կարրերա**),
- «ԷյԹիՋի Եվրոպա» (գործառնական տնօրեն՝ **Մասիմիլիանո Մազզա**),
- «3 Դի Փլաս» (վաճառքների տնօրեն՝ **Ուիսամ Մուալեմ**),
- «ԷքսԱր նանոթեք» (տնօրեն և հիմնադիր՝ **Ֆլորիան Դորինգ**),
- «ԷՏԿՈ» (Աստղագիտական և տիեզերական տեխնոլոգիաների տնօրեն՝ **Ամմար Ալ Ռավահի**):

Ծանոթագրական բնույթի կարճ հանդիպումներ են տեղի ունեցել բելգիացի սենատորներ **Սթիվեն Կ. և Դոմինիկ Տիլմանսի** հետ:

Ազգային և միջազգային գործակալությունների ներկայացուցիչների հետ քննարկվեցին համագործակցության ընդհանուր եզրերը, մասնավորապես՝ Երկրի դիտարկման (Earth observation), արբանյակային տեխնոլոգիաների, տիեզերական սարքաշինության, արդյունաբերական օպտիկայի, ծրագրային ապահովման բնագավառներում հայկական հետազոտական կազմակերպությունների և մասնավոր ընկերությունների հետ համատեղ հետազոտություններ իրականացնելու հնարավորությունները: Մասնավոր ընկերությունների ներկայացուցիչների հետ քննարկվեցին ՀՀ-ում մասնաճյուղեր հիմնելու և ՀՀ կազմակերպությունների հետ համագործակցելու հնարավորությունները:

7. Առաջարկություններն ու դրանց ընթացք տալու եղանակները, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Հանդիպումների և քննարկումների ընթացքում ձեռք բերված պայմանավորվածությունների համաձայն լրացուցիչ տեղեկություններ կպատրաստվեն և կտրամադրվեն արտերկրյա գործընկերներին, ինչպես նաև կուսումնասիրվեն վերջիններից ստացվող առաջարկները: Հաշվի առնելով ոլորտային համագործակցությունների առանձնահատկությունները՝ նախարարությունը ջանքեր կգործադրի մինչև 2022 թվականի 2-րդ եռամսյակի ավարտը ստացված նախնական քննարկումները նյութեղենացնելու ուղղությամբ՝ ունենալով արդեն ստորագրված համագործակցության հուշագրեր կամ համաձայնագրեր՝ ծրագրելով և իրագործելով հստակ միջոցառումներ:

Մինչև տարեվերջ կքննարկվի միասնական տաղավարով Հայաստանի մասնակցությունը հաջորդ տարի Փարիզում կայանալիք «73nd International Astronautical Congress» բազմաոլորտ միջոցառմանը:

Մինչև տարեվերջ կքննարկվի ԲՏԱՆ-ի հնարավոր անդամակցության հարցը «International Astronautical Federation»-ին:

Մինչև տարեվերջ պլանավորվեն Հայաստանի՝ Եվրոպական Տիեզերական գործակալությանը անդամակցության նախապատրաստական քայլերը:

8. Ստորագրություն, ամսաթիվ

Հայկ Ասլանյան

Արարատ Սահակյան

01. 11. 2021թ.